Արձանագրություն N 2

ԱՔ-ԲՄԱՇՁԲ-26/5 ծածկագրով էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Արմավիր 26 հունիսի 2026թ.
Ժամը՝ 15:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ալինա Հովհաննիսյան
Հանձնաժողովի
Գնահատող անդամներ՝ Հովհաննես Առաքելյան, Արփինե Ավագյան
Բացող անդամներ՝ Իրինա Գալստյան, Օքսաննա Պետրոսյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Սադաֆ Զորաբյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը
(Ալինա Հովհաննիսյան)

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. ԱՔ-ԲՄԱՇՁԲ-26/5 ծածկագրով էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով բաց մրցույթի հայտերի բացման մասին,
3. Ներկայացված հայտերում՝ հրավերով սահմանված փաստաթղթերի մասին,
4. Անհամապատասպանությունները շտկելու մասին,
5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

2. ԱՔ-ԲՄԱՇՁԲ-26/5 ծածկագրով էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով բաց մրցույթի հայտերի բացման մասին
(Ալինա Հովհաննիսյան)

Սահմանված ժամկետում, սահմանված կարգով հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Հասցե, Հեռախոս	Էլ. Փոստի հասցե
1	«Ուրբան դեվելոփմենթ» ՍՊԸ	ք. Երևան, Պարոնյան 21/4, Հեռ.՝ 044447444	contact.urbandevelopment@gmail.com
3	«ԲԻԼԴՐ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-«ԲԻԴԵՔ» ՍՊԸ ՀԳ	ՀՀ, ք. Երևան, Արցախի պող., 18ա շ., 37բն., Հեռ.՝ 077410001, 098125522 ՀՀ, ք. Երևան, Սասունցի Դավիթ 87ա, Հեռ.՝ 077410001, 098125522	builderconstruction.llc@gmail.com bedeck.llc@mail.ru info@bedeck.am

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Ներկայացված հայտերում հրավերով սահմանված փաստաթղթերի մասին
(Ալինա Հովհաննիսյան)

Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում՝ հրավերով սահմանված փաստաթղթերն առկա են:

Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում փաստաթղթերը կազմված են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, բացառությամբ **«ԲԻԼԴՐ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-«ԲԻԴԵՔ» ՍՊԸ ՀԳ-ի,** մասնավորապես՝ մասնակցի կողմից ներկայացված Դիմում-հայտարարության վրա իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջերի հղումները սխալ են:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. Անհամապատասխանությունները շտկելու մասին
(Ալինա Հովհաննիսյան)

Քանի որ հայտերի գնահատման արդյունքում արձանագրվել են անհամապատասխանություններ, ուստի հանձնաժողովը որոշեց.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 41-րդ կետի համաձայն վերը նշված անհամապատասխանությունները շտկելու նպատակով ծանուցել **«ԲԻԼԴՐ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-«ԲԻԴԵՔ» ՍՊԸ ՀԳ-ին,** որը պետք է ներկայացնի շտկված փաստաթղթերը մինչև 29.06.2026թ. 17:00-ն ներառյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին
(Ալինա Հովհաննիսյան)

ԱՔ-ԲՄԱՇՁԲ-26/5 ծածկագրով էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել հունիսի 29-ին ժամը 17:00-ին Արմավիրի համայնքապետարան, ք. Արմավիր, Հանրապետության 32 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Ալինա Հովհաննիսյան

անդամներ՝ Հովհաննես Առաքելյան

Արփինե Ավագյան

Իրինա Գալստյան

Օքսաննա Պետրոսյան

Քարտուղար՝ Սադաֆ Զորաբյան